

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունվարի 2013 թվականի N 43-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1269-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում գործող գիտության պետական կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1269-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 8-րդ կետը «նախագահից» բառից հետո լրացնել « նախագահի տեղակալից» բառերով.

2) 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին կետով.

«11.1. Նախագահն ունի տեղակալ, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը՝ նախագահի ներկայացմամբ.».

3) 12-րդ կետը՝

ա. 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին ենթակետով.

«6.1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին ներկայացնում է առաջարկություն նախագահի տեղակալի թեկնածության վերաբերյալ.».

բ. 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին ենթակետով.

«7.1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին ներկայացնում է առաջարկություն նախագահի տեղակալի նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ.».

գ. 9-րդ ենթակետը «ճանաչում» բառից հետո լրացնել «իր տեղակալի» բառերով.

4) 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին և 14.2-րդ կետերով.

«14.1. Նախագահի բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հանձնարարությամբ նախագահի պարտականությունները կատարում է նախագահի տեղակալը:

14.2. Նախագահի տեղակալը՝

1) իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար իր լիազորությունների սահմաններում իրականացնում է աշխատանքներ՝ տալով ցուցումներ և հանձնարարականներ.

2) կոմիտեի նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է իրեն հանձնարարված բնագավառների՝ կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին որոշակի հանձնարարականներ և առաջադրանքներ, դրանց կատարման նկատմամբ իրականացնում վերահսկողություն.

3) նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է նախագահի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

4) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

5) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

6) պարբերաբար նախագահին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին.

7) նախագահին է ներկայացնում առաջարկություններ նրա իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.

8) նախագահի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2013 թ. հունվարի 25  
Երևան